



# Քաղաքացիական կրթության թեստ

## Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք առաջադրանքների հրահանգներին, ճիշտ ըմբռնեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը, այնուհետև պատասխանեք հարցերին:

Թեստի առավելագույն միավորն է՝ 55

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ

Մաղթում ենք հաջողություն:



## Հրահանգ

### ➤ Առաջադրանք՝ ընտրովի պատասխաններով (№1-12, 19.1, 23.1, 23.2)

Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Պատասխանների թերթիկի վրա, ճիշտ պատասխանի համապատասխան վանդակում, դրեք **X** նշանը: Ոչ մի այլ նշում չի ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել նշված պատասխանը, ապա ամբողջությամբ ներկեք այն վանդակը, ուր դրել եք **X** նշանը, որից հետո նշեք պատասխանի նոր տարբերակը: Ուղղած պատասխանը կրկին անգամ հնարավոր չէ ընտրել: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր, ինչը նշված է առաջադրանքի երկայնքով:

(1) 1. Ինչպե՞ս է կոչվում հասարակության անդամների կողմից ճանաչված արժեքների, վարքագծերի և նորմերի համակարգը, որը տվյալ ժամանակահատվածում գերիշխող տեղ է զբաղեցնում հասարակության շրջանում:

ա) փոփ մշակույթ,

ծ) սուբմշակույթ,

ճ) ֆոլկ մշակույթ,

դ) կոնսուրմշակույթ:

(1) 2. Շուկայական տնտեսության պայմաններում ի՞նչը կարող է դառնալ ապրանքների էժանացման պատճառ:

ա) ինքնարժեքի բարձրացումը,

բ) մատակարարման պակասը,

գ) պահանջարկի ավելացումը,

դ) մատակարարման առատությունը:

(1) **3. Ո՞ր միջազգային կազմակերպության անդամ է Վրաստանը:**

ա) ՕՊԵԿ,

ბ) ՄԾՏՀ (ԲԻՍԵԿ),

գ) Եվրամիություն,

դ) Անկախ Պետությունների Համագործակցություն:

(1) 4. Ինչպե՞ս է կոչվում որոշակի ժամանակահատվածում երկրում արտադրված վերջնական ապրանքի և ծառայության շուկայական արժեքը:

ս) համախառն ներքին արդյունք,

ծ) համախառն շուկայական արտադրանք,

ճ) միասնական ազգային արժեք,

զ) ներքին այլընտրանքային արժեք:

(1) 5. Համաձայն Վրաստանի Սահմանադրության, ո՞ր դեպքում են դադարեցվում Վրաստանի խորհրդարանի անդամի լիազորությունները:

- I. Լիազորությունների դադարեցման վերաբերյալ խորհրդարանին ուղղված անձնական դիմումի հիման վրա:
- II. Պատգամավորին ժամկետից շուտ հետկանչի քվեարկողների մեծամասնության պահանջի հիման վրա:
- III. Հերթական նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառներով կեսից ավելի նիստերին ներկա չգտնվելու դեպքում:

ս) միայն I,

ծ) միայն II,

ճ) միայն I և III,


զ) բոլոր երեք դեպքերում:

(1) **6. Ո՞ր երևույթը բնորոշ է տնտեսական գլոբալացման գործընթացին:**

- ճ) անդրազգային կորպորացիաների քաղաքական և տնտեսական իշխանության բարձրացումը,
- Ն) ազգային տնտեսության վրա միջազգային տնտեսական համակարգերի ազդեցության նվազեցումը,
- Շ) աշխարհի երկրների միջև տնտեսական փոխկախվածության խորացումը,
- Ը) բնակչության միգրացիան զարգացող երկրներից դեպի զարգացած երկրներ:



- (1) 7. Միեման արտացոլում է մարդու իրավունքների և ազատությունների առանձնահատկությունները:  
Ի՞նչ պետք է լինի գրված հարցական նշանի փոխարեն:



- ս) անբաժանելի,  
ծ) անսահմանափակ,  
զ) հիերարխիկ,  
զ) կոլեկտիվ:

(1) **8. Տարբերակում են հասարակական կոնֆլիկտի մի քանի տեսակ: Կոնֆլիկտի լուծման ո՞ր ռազմավարություններն է նպատակահարմար օգտագործել շահերի քախման ժամանակ:**

- I. Որոշել, թե ինչ է հնարավոր զիջել և գնալ փոխզիջման:
- II. Դիրքորոշումներից դուրս նույնականացնել իրական շահերը,
- III. Որոնել փոխներգործության (ինտերակցիայի) նոր ուղիներ, օրինակ՝ կառուցվածքում դերերի փոփոխություն կամ պատասխանատվությունների վերաբաշխում:

Տ) միայն I և III ռազմավարությունները,

Ծ) միայն II և III ռազմավարությունները,

Ճ) միայն I և II ռազմավարությունները,

Թ) բոլոր երեք ռազմավարությունները:

(1) **9. Ո՞ր դատողությունն է ճիշտ փոխանցում «գենդերային դեր» հասկացության իմաստը:**

ս) Յուրաքանչյուր մշակույթում գոյություն ունեն յուրօրինակ պատկերացումներ առ այն, թե ինչ պետք է լինի բարոյապես ընդունելի ընդհանուր առմամբ մարդկանց վարքի մեջ՝ լինի նա կին, թե տղամարդ: Հետևաբար, չկա այնպիսի մշակույթ, որտեղ վարքի մեկ մոդելն ընդունելի է համարվում արական սեռի, մինչդեռ անընդունելի՝ իգական սեռի համար:

ծ) Յուրաքանչյուր հասարակությունում ընդունված են վարքի որոշակի մոդելներ, որոնք սահմանում են մարդու մշակութային ինքնությունը: Ավանդական հասարակություններում վարքի այս մոդելները ոչ մի կապ չունեն նրա հետ, թե որ կենսաբանական սեռի ներկայացուցիչ է անձը, և հետևաբար յուրաքանչյուր անհատ ինքն է ընտրում իր սոցիալական դերը:

ց) Որոշ հասարակություններում կան կարծրատիպային պատկերացումներ առ այն, որ յուրաքանչյուր մարդ ծնված օրվանից ունի յուրահատուկ սոցիալական դեր: Այս դերը հստակեցնելու համար հասարակությունը ստեղծում է յուրօրինակ մշակութային տարածք, որտեղ կնոջ և տղամարդու գործառույթներն ամբողջությամբ սահմանվում են առանձին անձի անհատական հնարավորությունների հիման վրա:

զ) Գոյություն ունի սոցիումալոգիային սահմանված վարքերի և վերաբերմունքների ամբողջ շարք, որը համարվում է մասկուլյար կամ ֆեմինիստական: Որոշ մշակույթներում այս սոցիալական դերերը սերտորեն կապված են մարդու կենսաբանական սեռի հետ, ինչը կարծրատիպային ակնկալիք է ստեղծում այն մասին, թե որն է կնոջ կամ տղամարդու համար համապատասխան վարքը:

(1) **10. Ո՞ր դրույթն է ճիշտ արտահայտում ժողովրդավարության բազմակարծության տեսության հիմնական ասպեկտը:**

Տ) Քաղաքական գործընթացը մրցակցություն է սոցիալական, մասնագիտական, տնտեսական կամ կրոնական տարբերվող խմբերի շահերի միջև: Այսպիսով, հասարակության քաղաքական համակարգի հիմնական սուբյեկտը ոչ թե առանձին անհատն է կամ ընդհանուր առմամբ ժողովուրդը, այլ տարբեր շահագրգիռ խմբերը:

Ծ) Իշխանության հիմնական աղբյուրը անհատն է, և նրա իրավունքներն ի տարբերության պետության առաջնահերթային են: Առանձին անհատի շահերն իրացնելու համար անհրաժեշտ չէ նույնականացնել նրան որևէ խմբի հետ, այլ հիմնական խնդիրն է ստեղծել անհատական ազատության իրավական և ինստիտուցիոնալ երաշխիքներ:

Ձ) Ժողովրդի մեծամասնության իշխանությունը բացարձակ է և առաջնահերթային առանձին անհատի կամ փոքրամասնությունների նկատմամբ: Անհատի ինքնավարությունը մերժվում է, մինչդեռ իշխանության իրականացման գործընթացում առաջնային արժեքը շնորհիվում է ժողովրդի ամբողջականությանը:

Թ) Պետությունում առանձին քաղաքացիների շահերը բավարարելու համար կարևոր է վերացնել հասարակական տարբեր շերտերը, տարբեր շահերի շուրջ ձևավորված կոալիցիաները, քանի որ դրանք ծառայում են միայն սեփական շահերի պաշտպանությանը: Սրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է մեծացնել առանձին անհատների դերը քաղաքական որոշումների կայացման գործընթացում:

(1) 11. Ինֆոգրաֆիկան արտացոլում է Սաքստատի 2020 թվականի տվյալները վարձու աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձի վերաբերյալ.

Վարձու աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը՝ 1 191.0 լարի



Կին 952.2 Շ  
Տղամարդ 1 407.7 Շ




Ձեռնարկատիրական սեկտոր 1 222.9 Շ  
Ոչ ձեռնարկատիրական սեկտոր 1 135.7 Շ



Պետական սեկտոր 1 024.4 Շ  
Ոչ պետական սեկտոր 1 284.9 Շ

Միջին ամսական անվանական աշխատավարձն՝ ըստ տարածաշրջանների (լարի)



## Ո՞ր հիմնավորումն է համապատասխանում ինֆորգրաֆիկայի տվյալներին:

- Տ) Պետական սեկտորում աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձն ավելի բարձր է, քան ձեռնարկատիրական սեկտորի աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը:
- Ծ) Մցխեթա-Մթիանեթիի բնակիչներն ունեն ամենաբարձր միջին ամսական անվանական աշխատավարձը, ինչը պայմանավորված է այս տարածաշրջանում ձեռնարկատիրական սեկտորի համակենտրոնացմամբ:
- Ձ) Գենդերային տեսանկյունից միջին ամսական անվանական աշխատավարձը հավասարակշռված է:
- Թ) Արևմտյան Վրաստանում միջին ամսական անվանական աշխատավարձին ամենամոտ ցուցանիշը Աջարիայի տարածաշրջանում է:

(1) **12. Առաջադրանքում ներկայացված են 2018 թվականի «Վրաստանի բնակչության վերաբերմունքը քաղաքական կուսակցությունների նկատմամբ» հետազոտության արդյունքները.**

- Վրաստանի բնակչության 55,2%-ը գտնում է, որ Վրաստանում չկա քաղաքական կուսակցություն, որը կլուծեր իրենց համար կարևոր խնդիրները:
- Վրաստանի բնակչության 52%-ը լիովին համաձայն է, մինչդեռ 35%-ը համաձայն է այն կարծիքին, որ մարդիկ քաղաքականություն են գնում իրենց բարօրության համար:
- Վրաստանի բնակչության 66%-ը երբեք չի կարդացել որևէ քաղաքական կուսակցության նախընտրական ծրագիրը:
- Բնակչության 38,5%-ի համար քվեարկելիս առավել կարևոր է կուսակցության նախընտրական ծրագիրը, իսկ 45,8%-ի համար՝ առաջնորդների ինքնությունը:
- Ի՞նչ չափանիշներով են ընտրում կուսակցությունները, թե ում պետք է առաջադրեն որպես թեկնածու խորհրդարանական ընտրություններում. չգիտեմ/հրաժարվում եմ պատասխանել՝ 20,8%, պրոֆեսիոնալիզմով՝ 24,1%, հասարակության մեջ ճանաչվածությամբ՝ 17,1%, ազնվությամբ՝ 6,6%, կուսակցության առաջնորդների հետ անձնական կապերով՝ 18,7%, փողով՝ 12,4%, այլ՝ 0,3%:
- Բնակչության 60.7%-ը գտնում է, որ ընտրություններում տղամարդը հաղթելու ավելի մեծ հնարավորություն ունի, քան կինը:
- Բնակչության 17%-ը կցանկանար, որ իր դուստրը գնա քաղաքականություն:

## Տվյալների հիման վրա կայացված n<sup>o</sup> բ եզրահանգումն է ճիշտ:

- ա) Վրացական քաղաքականությունը կանանց համար բարեկեցիկ միջավայր է:
- բ) Վրացական քաղաքականությունում հիմնականում պրոֆեսիոնալներ են գործում:
- գ) Ընտրողն ավելի շատ նախատեսում է կոնկրետ քաղաքական առաջնորդի անձը, քան նախընտրական ծրագրերն ու կուսակցական դոկտրինան:
- դ) Բնակչության մեծամասնությունը համարում է, որ քաղաքական գործիչները քաղաքական իշխանությունն օգտագործում են բնակչության խնդիրներն արմատախիլ անելու և ոչ թե անձնական բարօրության հասնելու համար:




## Հրահանգ

### Հաջորդականության սահմանում (№13)

Առաջադրանքում տրված թվարկացանկը դասավորեք նշված սկզբունքի համաձայն:  
Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված վանդակներում: Հաշվի առեք, որ վանդակում գրվում է միայն ընտրված պատասխանի համապատասխան թվանշանը:  
Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

(1) 13. Մխեմայում տրված հաշտարարության (մեղիացիա) գործընթացի փուլերը դասավորե՛ք հաջորդականությամբ.



				5*	
--	--	--	--	----	--





\* աղյուսակում նշված է ճիշտ պատասխանը

## Հրահանգ

### Համապատասխանության որոշում (№14, 15, 16)

Առաջադրանքում երկու սյունակով տրված է տարբեր տեսակի թվարկացանկ: Որոշեք համապատասխանությունն այս երկու սյունակներում ներկայացված տեղեկատվության միջև: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկում տրված աղյուսակում: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով


(1) 14. II սյունակում տրված ՄԱԿ-ի մասնագիտացված հաստատությունները համապատասխանեցրեք I սյունակում ներկայացված դրոշմներին.






I. Դրոշմներ		II. ՄԱԿ-ի մասնագիտացված հաստատություններ
<p>ա)</p> 	<p>ծ)</p> 	<ol style="list-style-type: none"> <li>1. Աշխատանքի միջազգային կազմակերպություն</li> <li>2. Առողջապահության Համաշխարհային Կազմակերպություն</li> <li>3. Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն</li> <li>4. Միջազգային ծովային կազմակերպություն</li> </ol>
<p>ժ)</p> 	<p>զ)</p> 	

- (2) **15. II սյունակում տրված որոշումների կայացման գործընթացում հանրության ներգրավվածության մոդելները համապատասխանեցրեք I սյունակում տրված հասարակության ներգրավվածության որակին.**

I. Նպատակներ	II. Հասարակական ներգրավվածության մոդելներ
ա) Հանրության շահերի և ցանկությունների ըմբռնումը և դրանց նախատեսումը որոշում ընդունելիս:	1. Իրազեկում
ծ) Վերջնական որոշում կայացնելու հնարավորության փոխանցումը հանրությանը:	2. Խորհրդատվություն
ճ) Համագործակցություն հասարակության հետ որոշումների կայացման գործընթացի բոլոր ասպեկտներում:	3. Ներգրավվածություն
Տ) Հավասարակշռված և օբյեկտիվ տվյալների/տեղեկությունների ժամանակին տրամադրում հանրությանը:	4. Կոլաբորացիա
յ) Հանրությունից հետադարձ կապի ստացում խնդրահարույց հարցերի, դրանց լուծման այլընտրանքների և վերջնական լուծումների վերաբերյալ:	5. Լիազորության շնորհում

(2) 16. Քարտեզն արտացոլում է աշխարհի երկրներում գոյություն ունեցող կառավարման ձևերը: Համապատասխանեցրեք I սյունակում տրված ձևերին II սյունակում ներկայացված քարտեզի լեգենդի գույները.



I. Կառավարման ձևեր	II. Քարտեզի լեգենդի գույները
ա) Նախագահական հանրապետություն	1. 
բ) Խորհրդարանական սահմանադրական միապետություն	2. 
գ) Բացարձակ միապետություն	3. 
դ) Խորհրդարանական հանրապետություն	4. 
ե) Կոմունիզմ	5. 

## Հրահանգ

### Մխալի ուղղում (№17)

Առաջադրանքում տրված է տեքստ, որտեղ թույլ են տրված փաստացի սխալներ (տարեթիվ, տերմին, անուն և այլն): Բացահայտեք և ուղղեք դրանք: Բացահայտած սխալը և դրա ուղղած տարբերակը գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում (սխալը՝ I սյունակում, իսկ ուղղած տարբերակը՝ II սյունակում): Հաշվի առեք, որ յուրաքանչյուր բացահայտված սխալ, իր ուղղված տարբերակի հետ միասին, գնահատվում է 1 միավոր: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

## (7) 17. Ուշադիր ընթերցեք տեքստը, գտեք և ուղղեք սխալները.

### Տեղական ինքնակառավարում

Պետությունը տարբեր շրջաններ և բնակավայրեր է ներառում: Տեղի բնակչության շահերը նախատեսելու և դրանք արդյունավետորեն բավարարելու համար կարևոր է, որ իշխանությունը բաշխվի ոչ միայն պետական մակարդակով, այլ նաև տարածքային սկզբունքով: Հենց տեղական ինքնակառավարման մարմիններն են քաղաքացիների իրավունքն ու հնարավորությունը՝ տեղական նշանակության հարցերը տեղական շահերին համապատասխան, օրենսդրության շրջանակներում լուծելու համար:

Պետական իշխանության և ինքնակառավարման միավորների միջև լիազորությունների տարանջատումը հիմնված է սուբորդինացիայի սկզբունքի վրա: Համաձայն այս սկզբունքի՝ այն հարցը, որը հնարավոր է լուծել ստորին մակարդակում, չպետք է լուծվի վերին մակարդակում:

Վրաստանում ներկայիս գործող տեղական ինքնակառավարման օրենսգրքի համաձայն տարբերակում են ինքնակառավարման լիազորությունների երկու տեսակ՝ սեփական և հայտարարված (դեկլարացված): Սեփական լիազորություններին դասվում են՝ տեղական բյուջեի նախագծի պատրաստումը, քննարկումը և հաստատումը, տեղական գանձումների և հարկերի սահմանումն ու չեղարկումը, դրանց դրույքաչափերի սահմանումը: Սեփական լիազորությունների շրջանակներում ինքնակառավարումն ապահովում է նաև տեղական փողոցների, պուրակների և այլ հանրային վայրերի մաքրման, կանաչապատման և արտաքին լուսավորության աշխատանքները:

Վրաստանի օրենսդրության համաձայն՝ ինքնակառավարվող միավորը մասնավոր իրավունքի իրավաբանական անձ է: Ինքնակառավարվող քաղաքը կամ ինքնակառավարվող համայնքը, որն ունի վարչական սահմաններ և վարչական կենտրոն, կոչվում է խորհուրդ:

*[անցնել տեքստի երկրորդ էջին](#)*



Տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինը սակրեբուլոն (ավագանի) է, որն ընտրվում է համապատասխան տարածքում բնակվող բնակչության կողմից, 4 տարի ժամկետով: Վրաստանի օրենսդրության համաձայն՝ ինքնակառավարման գործադիր մարմնի բարձրագույն պաշտոնատար անձը քաղաքապետն է: Քաղաքապետ կարող է ընտրվել ընտրելու իրավունք ունեցող Վրաստանի քաղաքացին 25 տարեկանից, ով Վրաստանում բնակվել է առնվազն 5 տարի:

Վրաստանի Առաջին Հանրապետության ժամանակահատվածում տեղական ինքնակառավարման մարմինների ներդրումը վրացի քաղաքական գործիչները համարում էին ժողովրդավարական կառուցվածքի հաստատման կարևոր գործոն, ինչի մասին վկայում են Վրաստանի տարածքի հիմնական շրջաններում (Մազրա) անցկացված «Էրոբա»-ի ընտրությունները: Այնուամենայնիվ, 1925 թվականին ռուսական Կարմիր բանակի մուտք գործելուն Թբիլիսի և Վրաստանի խորհրդայնացմանը հետևեց ամբողջովին կենտրոնացված կառավարման շրջանը: Խորհրդային Միության ոչ ժողովրդավարական կառավարման համակարգը բացառում էր տեղական ինքնակառավարումների իրական առկայությունը:

1989 թվականին Վրաստանի վերանկախացումից անմիջապես հետո տեղական ընտրությունների անցկացումը ինքնակառավարման հաստատման յուրօրինակ փորձ էր: Հետագայում «Տեղական ինքնակառավարման և կառավարման մասին» Օրգանական օրենքի հիման վրա 1998 թվականին անցկացված ընտրությունների արդյունքում ընտրվեցին ավագանիներ (սակրեբուլո), որոնց քանակն անցնում էր հազարից: Այսօրվա դրությամբ, Վրաստանում ինքնակառավարվող միավորների թիվը հարյուրից ավելի քիչ է: Ապակենտրոնացման զարգացման համար կարևոր էր Վրաստանի խորհրդարանի կողմից վավերացնել 1974 թվականի Եվրոպայի Խորհրդի կողմից ընդունված Եվրոպական Խարտիան: Դրանով, Եվրոպական մյուս երկրների նման մեր երկիրը ևս ընդունեց, որ տեղական ինքնակառավարումը ներկայացնում է ժողովրդավարական վարչակարգի հիմնական հիմքերից մեկը:

*[Վերադառնալ տեքստի առաջին էջին](#)*

## Հրահանգ


**Առաջադրանք՝ քաղ վերջավորությամբ (№ 18, 19.2, 19.3, 20, 21, 22, 23.3-23.7)**

Ուշադրությամբ ծանոթացեք առաջադրանքի պայմանին: Պատասխանների թերթիկի համապատասխան տեղում գրեք առաջադրանքի պայմանին համարժեք, կոնկրետ, հստակ ձևակերպված պատասխանը: Միավորների առավելագույն քանակը նշված է յուրաքանչյուր առաջադրանքի երկայնքով:

(4) **18. Սխեման ամբողջությամբ չի արտացոլում Վրաստանում գործող հարկերը: Լրացրե՛ք սխեման.**

Հարկեր	Հարկերի տեսակներ	Ուղղակի / անուղղակի
Ընդհանուր-պետական	Եկամտահարկ	Ուղղակի
	Շահութահարկ	18.1
	18.2	Անուղղակի
	Ակցիզային հարկ	Անուղղակի
	Ներմուծման հարկ	18.3
Տեղական	18.4	Ուղղակի

(3) 19. Ներկայացված է 2018 թվականի աշխարհի քարտեզը: Քարտեզի վերլուծության հիման վրա պատասխանեք հարցերին.



(1) **19.1 Ի՞նչ է արտացոլված ներկայացված քարտեզի վրա:**

ա) կրոնի տարածումը,

ծ) վտարանդիության ցուցանիշը,

զ) տնտեսական զարգացումը,

զ) երեխաների իրավունքների պաշտպանության աստիճանը:

(1) **19.2 Քարտեզի տվյալների հիման վրա, մտորեք Աֆրիկայի մայրցամաքի կենտրոնական մասում առկա դրության մասին:**

(1) **19.3 Կիրառելով քարտեզի տվյալները դատողություններ արեք, թե ինչպիսի՞ն է հարաբերակցությունը քարտեզի վրա պատկերված երևութի և երկրի ժողովրդավարության մակարդակի միջև: Տեսակետը հիմնավորեք:**

(5) **20.** Առաջադրանքում տրված է դպրոցական նախագծի նպատակի, խնդիրների և իրականացման ուղիների ոչ լիարժեք տարբերակը: Դպրոցական նախագծի տրված հատվածին ավարտուն տեսք տալու համար առաջադրանքները կատարեք հետևյալ հաջորդականությամբ.

- I. Որոշեք և գրառեք II խնդիրը, ելնելով աղյուսակում տրված իրականացման ուղիների թվարկացանկից: (*Առաջադրանք 20.2*)
- II. Գրեք իրականացման երեք տարբեր ուղի, որոնք Ձեր կարծիքով, նպաստում են աղյուսակում տրված I խնդրի կատարմանը: (*Առաջադրանք 20.3*)
- III. Որոշեք և գրառեք նախագծի նպատակը, որին հնարավոր է հասնել նախագծի երկու խնդիրների և դրանց իրականացման ուղիներից ելնելով: (*Առաջադրանք 20.1*)

(1)	<b>20.1</b>	<b><u>Նախագծի նպատակը.</u></b> <i>(Գրեք նպատակը, որին հնարավոր է հասնել տրված խնդիրներից և իրականացման ուղիներից էլնելով):</i>
(1)	<b>20.2</b>	<p><b><u>Նախագծի I խնդիրը.</u></b> Աշակերտների կողմից ըմբռնել ժողովրդավարական ընտրությունների նշանակությունը, խորացնել ընտրական համակարգերի մասին տեսական գիտելիքները:</p> <p><b><u>Նախագծի II խնդիրը.</u></b> <i>(Որոշեք և գրեք կոնկրետ խնդիր, էլնելով II խնդրի իրականացման ուղիներից):</i></p>
(3)	<b>20.3</b>	<p><b><u>I խնդրի իրականացման ուղիներ.</u></b> <i>(գրեք տրված խնդրի իրականացման երեք տարբեր ուղիներ):</i></p> <ol style="list-style-type: none"> <li>1.</li> <li>2.</li> <li>3.</li> </ol> <p><b><u>II խնդրի իրականացման ուղիներ.</u></b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Հրավիրել ընտրություններում որպես դիտորդ աշխատող հասարակական կազմակերպությանը՝ «Դիտորդների դերը ազատ և արդար ընտրություններում» թեմայով աշակերտների համար վարժանք անցկացնելու նպատակով:</li> <li>2. Ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ կազմակերպել պանելային քննարկումներ «Երիտասարդության խնդիրները կուսակցության նախընտրական ծրագրերում» թեմայով,</li> <li>3. Դպրոցում անցկացնել իմիտացված ընտրություններ:</li> </ol>

#### (4) 21. Ծանոթացեք նկարին և պատասխանեք հետևյալ հարցերին.

Չե՛մ ուզում, որ պետական օրենքները սահմանափակեն ինձ: Չե՛մ ուզում, որ բարոյական օրենքները սահմանափակեն ինձ: Ես ուզում եմ լիովին ազատ լինել:

Կյանք

Լավ, եղիբ:

Կյանք

(1) 21.1 Ո՞րն է նկարի գլխավոր ասելիքը:

(1) 21.2 Ո՞ր քաղաքական գաղափարախոսությանն է բնորոշ պետական օրենքներից ազատ կյանքի պահանջը և ո՞ր հիմնական փաստարկի վրա է հիմնվում այս գաղափարախոսությունը:

(2) 21.3. Հիմնավորված դատողություններ արեք, թե ինչո՞ւ է կարևոր, որ պետական օրենքներով մարդկանց համար սահմանվեն սահմանափակումներ: Հիմնավորված դատողություններ արեք, թե ինչո՞ւ է անձի համար կարևոր բարոյական նորմերի պահպանումը:



(5) **22. Ծանոթացեք տեքստին և կատարեք առաջադրանքը ստորև ներկայացված ցուցումների համապատասխան.**

«Գործարանների ավտոմատացումն արդեն ոչնչացրել է աշխատատեղերն ավանդական արդյունաբերություններում, և արհեստական բանականության աճը, ամենայն հավանականությամբ, կհանգեցնի այս աշխատատեղերի վերացմանը միջին խավի շրջանում՝ թողնելով միայն ամենահոգատար, ստեղծագործական և վերահսկող դերերը:

... Համացանցը և այն հարթակները անհատների շատ փոքր խմբերին թույլ են տալիս, որ ստանան հսկայական եկամուտներ՝ վարձելով շատ քիչ թվով մարդկանց: Դա անխուսափելի է, դա առաջընթաց է, սակայն միևնույն ժամանակ սոցիալապես կործանարար (դեստրուկտիվ) է»:

**Մթիվեն Հոքինգ,** «Մեր մոլորակի համար ամենավտանգավոր ժամանակներն են», Գարդիանի, 2016 թվական:

(1) 22.1 Ելնելով տեքստից որոշեք և անվանեք բանավեճի թեման: Դատողություններ արեք տվյալ տեքստի հետ Ձեր ընտրած բանավեճի թեմայի համապատասխանության և արդիականության մասին:

(4) 22.2 A. Անվանեք երկու փաստարկ բանավեճի ընթացքում ծագած դիրքորոշումը պաշտպանելու համար:

B. Անվանեք երկու փաստարկ բանավեճի ընթացքում ծագած դիրքորոշումը հերքելու համար:

(Յուրաքանչյուր փաստարկ պետք է ունենա էապես տարբերվող իմաստ)

(9) **23. Վերլուծեք ներկայացված աղբյուրները և պատասխանեք հետևյալ հարցերին.****Աղբյուր N1**

Գերմանիայի Նացիոնալ-Սոցիալիստական կուսակցության պարամիլիտարիստական գրոհող ջոկատի երթը Նյուրնբերգում, 1929 թվական

**Աղբյուր N2**

«Միսեդրիոնիի» ղեկավար Ջաբա Իոսելիանին Վրաստանի քաղաքացիական պատերազմի ժամանակ, 1992 թվական



### Աղբյուր N3

«Յուրաքանչյուր պետություն հիմնվում է բռնության վրա», - ժամանակին ասել է Տրոցկին Բրեստ-Լիտովսկում: Եվ դա իսկապես այդպես է: Եթե գոյություն ունենային միայն այնպիսի սոցիալական կազմավորումներ, որոնց համար հայտնի չէ, թե ինչ է բռնությունը, որպես միջոց, ապա կհերքվեր «պետության» հասկացությունը: ... Բնականաբար, ամեննին էլ այնպես չէ, ասես բռնությունը պետության նորմալ կամ նույնիսկ միակ միջոցն է: Խոսքը ոչ թե դրա մասին է, այլ այն մասին, որ բռնությունը պետության յուրահատուկ միջոցն է: Այսօրվա դրությամբ պետության և բռնության միջև հարաբերությունը առանձնահատուկ ինտիմություն է ձեռք բերել: Ցեղային միավորումներից սկսած անցյալի բոլոր, լիովին տարբերվող միավորումների Ֆիզիկական բռնությունը միանգամայն նորմալ միջոց էր համարվում բոլորի համար: Այսօրվա դրությամբ անհրաժեշտ է հրապարակավ հայտնել, որ հենց պետությունն է մարդկանց այնպիսի միասնությունը, որն իր ձեռքն է առնում ֆիզիկական ուժի օրինական կիրառման մենաշնորհը տվյալ տարածքի սահմաններում: Արդիականության յուրահատկությունն այն է, որ յուրաքանչյուր միությանը կամ առանձին անհատին այն ֆիզիկական բռնության իրավունք է տալիս միայն այնքանով, որքանով իր հերթին, դա թույլ է տալիս պետությունը: Միայն ու միայն պետությունն է համարվում բռնություն գործադրելու «իրավունքի» միակ աղբյուրը: Ուստի մեզ համար «քաղաքականությունը» ոչ այլ ինչ է, եթե ոչ իշխանությանը մասնակցելու կամ դրա բաշխման վրա ներգործություն ձեռք բերելու ձգտում»:

Մաքս Վեբեր «Քաղաքականությունը, որպես կոչ և արհեստ», 1919 թվական

#### Աղբյուր N4

«Կառավարությունների մեծ մասը գրեթե միշտ փորձում է մենաշնորհել բռնություն գործադրելու իրավունքը: Եթե օրինական ուժ կարող է կիրառել միայն կառավարությունը, և այդ կիրառումը սահմանափակված է օրենքով, ապա ավանդական քաղաքականությունը հնարավոր է: Հնարավոր չէ անցկացնել ժողովրդավարական ընտրություններ, դատական քննարկումներ, մշակել օրինագծեր և գործարկել օրենքներ, կամ կառավարության ցանկացած այլ հնամուլական գործունեություն, եթե պետությունից բացի, ուժ կիրառելու հնարավորություն ունեն նաև այլ անձինք:

Ահա թե ինչու են ժողովրդավարության և օրենքի գերակայության խախտումը ցանկացող մարդիկ և կուսակցությունները ստեղծում և ֆինանսավորում բռնի կազմակերպություններին, որոնք ընդգրկվում են քաղաքականությանը: Նման խումբը կարող է լինել քաղաքական կուսակցության ռազմականացված թևը, կոնկրետ քաղաքական գործչի անձնական պաշտպանությունը կամ մի հայացքից, քաղաքացիների մասնավոր նախաձեռնությունը, թեև որպես օրենք պարզվում է, որ այս նախաձեռնությունը կազմակերպված է այս կամ այն կուսակցության կամ այդ կուսակցության առաջնորդի կողմից».

**Տիմոթի Սնայդեր «Տիրանիա, XX դարի քսան դաս», 2016 թվական**

### Աղբյուր N5

«Քանի դեռ մարդիկ չունեն ընդհանուր իշխանություն, որը բոլորին ակնաձանքի իրավիճակում կպահի, նրանք պատերազմ կոչվող իրավիճակում են գտնվում և դա բոլոր մարդկանց պատերազմն է բոլոր այլ մարդկանց դեմ: Քանի որ պատերազմը միայն պայքարի կամ առճակատման պահ չէ, պատերազմ է կոչվում ժամանակի այն հատվածը, երբ բավարար չափով պարզ է պայքարի միջոցով առճակատման կամքը: Ուստի, ժամանակ հասկացությունը պետք է դիտարկենք որպես պատերազմի բնույթի մի մաս, ինչպես դա անում ենք եղանակի դեպքում: Օրինակ, վատ եղանակ ենք անվանում ոչ թե մանրամաղ անձրևը, այլ մի քանի օրվա անձրևոտ եղանակը, այնպես էլ պատերազմի էությունն է՝ ոչ միայն պայքար, այլև պայքարի արտահայտված պատրաստակամություն ողջ այն ժամանակահատվածում, երբ պատերազմից պաշտպանված չենք: Բոլոր մյուս ժամանակները խաղաղություն են կոչվում»:

**Թոմաս Հոբս, «Լևիաթան», 1651 թվական**

## Աղբյուր N6

«Ճիշտ դրանում է կայանում պետության էությունը, որը կարելի է սահմանել որպես մեկ անձնավորություն, որի գործողության հեղինակ հոչակեցին իրենց շատերը, ովքեր փոխադարձաբար համաձայնության եկան, որ նա կարող է իրենց բոլորի ուժը և հմտությունները կիրառել այնպես, ինչպես անհրաժեշտ կհամարի խաղաղության և ընդհանուր անվտանգության համար: Նման անձնավորությանն անվանում են ինքնիշխան (սուվերեն) և նրան վերագրվում է ինքնիշխան իշխանությունը, իսկ բոլոր մյուսները նրա հպատակության ներքո են: Ինքնիշխան իշխանություն հնարավոր է ձեռք բերել երկու ճանապարհով. մի դեպքում դա տեղի է ունենում բնական ուժով, այնպես ինչպես տղամարդն է ստիպում իր երեխաներին, որպեսզի իրենք էլ և իրենց երեխաներն էլ ենթարկվեն իր իշխանությանը, քանի որ հրաժարվելու դեպքում նա կարող է ոչնչացնել նրանց, այնպես էլ տղամարդը կարող է պատերազմով հնազանդեցնել ուրիշներին՝ նրանց կյանքը փրկելու պայմանով: Երկրորդ ճանապարհն այն է, երբ մարդիկ կամավոր համաձայնում են ենթարկվել մեկ անձի կամ մարդկանց խմբին՝ հույս ունենալով, որ նրանք կպաշտպանեն իրենց մյուսներից: Վերջինս կարող ենք անվանել քաղաքական պետություն կամ սահմանման միջոցով ստեղծված պետություն, իսկ առաջինը՝ ձեռքբերման միջոցով ստեղծված պետություն»:

**Թոմաս Հոբս, «Լևիաթան», 1651 թվական**

## Աղբյուր N7

«Քանի որ ինքնիշխանը հռչակվել է ձայների մեծամասնությամբ, նրանք, ովքեր այլ կարծիք ունեին, այժմ պետք է համաձայնվեն մնացածի հետ, այսինքն որպես [սեփական] ընդունեն ինքնիշխանի բոլոր գործողությունները: Այլ դեպքում արդար կլինի, եթե մյուսները նրան ոչնչացնեն: Որովհետև եթե նա իր կամքով է մտել խմբի միասնության մեջ, ապա նա այդպիսով բավականաչափ հայտարարել է իր կամքը և համաձայնել կիսել մեծամասնության որոշումները: Հետևաբար, եթե նա հրաժարվի [կիսել] կամ իր բողոքն արտահայտի [ինքնիշխանի] որևէ որոշման դեմ, նա կհակադրվի իր պայմանագրին և, ելնելով այստեղից, անարդար կվարվի: [Մյուս կողմից], անկախ նրանից, հանդիսանում է նա, թե ոչ միության անդամ, կամ ինչ-որ մեկը հարցրել է արդյոք նրա համաձայնությունը, նա կամ պետք է համաձայնի նրանց որոշմանը, կամ մնա այն պատերազմական վիճակում, որում եղել է մինչ այդ: Նման դեպքում ցանկացած մարդ կարող է ոչնչացնել նրան, և դա չի համարվի անարդարություն»:

Թոմաս Հոբս, «Լևիաթան», 1651 թվական



(1) **23.1** **Ըստ Հոբսի՝ ո՞ր իրավիճակն է կոչվում «բոլոր մարդկանց պատերազմը բոլոր այլ մարդկանց դեմ»:**

ս) քաղաքացիների հակասությունները կենցաղային հարցերի շուրջ,

ծ) իրավիճակ, երբ գոյություն չունի ընդհանուր իշխանություն,

ճ) երկու հակադրված կողմերի միջև բախման պահը,

զ) իրավիճակ, երբ քաղաքացիները զգում են վտանգ պետության կողմից:

(1) **23.2 Ըստ N6 աղբյուրի՝ քաղաքական պետություն կարող ենք անվանել այն պետությունը, որտեղ.**

ս) մարդիկ կամավոր ենթարկվում են ինքնիշխանին, որը պաշտպանում է նրանց այլ մարդկանց կողմից բռնությունից,

ծ) քաղաքացիները ստիպված են ենթարկվել իշխող ուժին, որպեսզի վերջինս չկործանի նրանց կյանքն ու ազատությունը,

ճ) ուժեղ անձնավորությունը պատերազմի ուժով հպատակեցնում է այլ մարդկանց և նրանց կյանքը պահպանելու պայմանով սահմանում պետական կառավարում,

Տ) իշխանությունը հավասարաչափ բաշխված է մարդկանց խմբի յուրաքանչյուր անդամի միջև, և յուրաքանչյուր ոք ունի ինքնիշխան իշխանություն:

- (1) 23.3 Դատողություններ արեք, թե ինչ նկատի ունեք Թոմաս Հոֆսը «մեկ անձ, որի գործողության հեղինակ հռչակեցին իրենց շատերը» նախադասության մեջ:
- (2) 23.4 Դատողություններ արեք N7 աղբյուրում տրված մեծամասնության և փոքրամասնության միջև վերաբերմունքի մասին: Գնահատեք տրված վերաբերմունքը լիբերալ-ժողովրդավարական հեռանկարից:
- (2) 23.5 Ըստ Մաքս Վեբերի տեքստի՝ ի՞նչ է նշանակում բռնություն գործադրելու լեգիտիմ իրավունք: Դատողություններ արեք, թե պետությունն ի՞նչ միջոցներով է այն իրականացնում:
- (1) 23.6 Դատողություններ արեք, թե ժամանակակից լիբերալ-ժողովրդավարական պետությունում ո՞ր օրինական միջոցներով է լուծված բռնություն գործադրելու լեգիտիմ իրավունքի սահմանափակումը:
- (1) 23.7 Դատողություններ արեք, թե հնարավո՞ր է արդյոք իրականացնել «ավանդական քաղաքականությունը» N1 և N2 աղբյուրներում նկարագրված իրավիճակում: Հիմնավորեք ձեր դատողությունը հենվելով աղբյուրների վրա: